Արձանագրություն N 2

«ԿԿ-ԳՀԾՁԲ-26/23» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 18 ապրիլի 2026 թ. ժ. 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Հասրաթյան, Մ. Խարատյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Ղուկասյան
Բացակա՝ Հ. Վարդանյան

I. Գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Անվանումը	Հասցե
1	«Մեգասոֆթ» ՍՊԸ	Ք. Երևան, Չարենցի 1
2	ՌՈՔԵԹ ՍԻՍԹԵՄՍ ՍՊԸ	Ք. Երևան, Նալբանդյան 48/1

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0, բացակա՝ 1:

2. Ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պահանջներին.

- չեն համապատասխանել «Մեգասոֆթ» ՍՊԸ–ի և ՌՈՔԵԹ ՍԻՍԹԵՄՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը. Հրավերով սահմանված էր՝ Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող հինգ տարիների ընթացքում պատշաճ կերպով իրականացրած լինի նմանատիպ առնվազն երեք պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի գնման գնի հարյուր տոկոսից: Ընդ որում, առնվազն մեկ

պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի գնման գնի հիսուն տոկոսից, իսկ ամենափոքր պայմանագրի ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի գնման գնի տասը տոկոսից: Նմանատիպ են համարվում մասնակցի կողմից տեղեկատվական համակարգերի մշակման՝ մասնավորապես անշարժ գույքի ռեեստրների և պորտալների ստեղծման հետ կապված աշխատանքների իրականացումը, ներդրման և սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրերը, որոնք պետք է իրենց բնույթով համանման լինեն սույն տեխնիկական առաջադրանքով նկարագրված աշխատանքներին՝ բովանդակության, բարդության և օգտագործված տեխնոլոգիաների առումով:

Մասնակիցը նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար պետք է հայտով ներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրության) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ինչպես նաև հաշիվ-ապրանքագրերը: «Մեգաստֆթ» ՍՊԸ-ին տրվել է շտկման հնարավորություն՝ ներկայացնել անհրաժեշտ նմանատիպ համարվող պայմանագրերը: Անհամապատասխանությունը շտկվել է, մասնակցի հայտը գնահատվել է բավարար:

ՌՈՔԵԹ ՍԻՍԹԵՄՍ ՍՊԸ-ին տրվել է շտկման հնարավորություն՝ վերջինիս կողմից ներկայացված երեք նմանատիպ պայմանագրերից երկուսում բացակայում են պայմանագրերի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը՝ ընդունման-հանձնման ակտ, արձանագրություն կամ դրանց բացակայության դեպքում պայմանագրի մյուս կողմի ներկայացուցչի կողմից գրավոր հավաստում առ այն, որ պայմանագրով նախատեսված ծառայությունները կատարվել են պատշաճ և սահմանված ժամկետներում: Անհամապատասխանությունը շտկվել է, մասնակցի հայտը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0, բացակա՝ 1:

2. Ընթացակարգի հրավերով սահմանված՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին՝ համապատասխանում են:

4. Մասնակցի կողմից առաջարկված գինը.

Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)

Չափաբաժնի անվանումը	«Մեգասոֆթ» ՍՊԸ	ՌՈՔԵԹ ՍԻՍԹԵՄՍ ՍՊԸ	Նախահաշվային արժե (գինն առանց ԱԱՀ)
1	2		
«Չափագրողների առցանց գրասենյակ»-ում փոփոխություններ իրականացնելու և բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված առանձին միավորների գնահատումը իրականացնելու ծառայություններ	**6850000**	5570000	7000000

5. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ չեն եղել: Ներկայացված գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարի առաջարկների հիման վրա՝ ՌՈՔԵԹ ՍԻՍԹԵՄՍ ՍՊԸ-ի ներկայացրած հայտում գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնագիտական փորձառությունը գնահատվում է 0 միավոր, քանի որ հրավերով սահմանված է՝ **Նմանատիպ են համարվում մասնակցի կողմից տեղեկատվական համակարգերի մշակման՝ մասնավորապես անշարժ գույքի ռեեստրների և պորտալների ստեղծման հետ կապված աշխատանքների իրականացումը, ներդրման և սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրերը, որոնք պետք է իրենց բնույթով համանման լինեն սույն տեխնիկական առաջադրանքով նկարագրված աշխատանքներին՝ բովանդակության, բարդության և օգտագործված տեխնոլոգիաների առումով:** Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ՌՈՔԵԹ ՍԻՍԹԵՄՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերը չեն համարվում համարվում մասնագիտական փորձառություն:

Ներկայացված գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարի առաջարկների հիման վրա՝ «Մեգասոֆթ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում Մասնագիտական փորձառությունը գնահատվում է 1 միավոր՝ այսինքն հրավերի պահանջների համապատասխան:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ՌՈՔԵԹ ՍԻՍԹԵՄՍ ՍՊԸ-ի և «Մեգասոֆթ» ՍՊԸ-ի գնային առաջարկը գնահատվում է 1 միավոր:

Ներկայացված գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարի առաջարկների հիման վրա՝ ՌՈՔԵԹ ՍԻՍԹԵՄՍ ՍՊԸ-ի հայտի միավորների հանրագումարը կազմում է 1, իսկ Մեգաստֆթ ՍՊԸ-ի միավորների հանրագումարը՝ 2 միավոր:

Ներկայացված գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարի առաջարկների հիման վրա՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մեգաստֆթ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Գնումները համակարգողին՝ ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությունը ներկայացնել ստորագրման:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0, բացակա՝ 1:

7. Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գին առաջարկած մասնակցին նախապատվություն տալու սկզբունք:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Կ. Հակոբյան
Անդամներ՝ _____ Ս. Հասրաթյան
_____ Մ. Խարատյան
Քարտուղար՝ _____ Ն. Ղուկասյան